Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2023 թվականի N -Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 1047 քաղաքացու, որոնցից 528-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 28-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 491-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 382 պահեստազորային, որոնցից՝ 100 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 9-ը ներառյալ, 63 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ից հոկտեմբերի 27-ը ներառյալ, 83 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից նոյեմբերի 2-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 3-ը ներառյալ, 127 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ից նոյեմբերի 5-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով մինչև 262 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 10-ը ներառյալ,

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 50 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 10-ը ներառյալ,

4) կապի մասնագիտություններով մինչև 51 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 10-ը ներառյալ,

5) հետախուզական մասնագիտություններով մինչև 168 պահեստազորային, որոնցից՝ 80 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 13-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ից հոկտեմբերի 27-ը ներառյալ, 70 պահեստա-զորային՝ 2023 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 9-ը ներառյալ,

6) անօդաչու թռչող սարքերի մասնագիտություններով մինչև 30 պահեստազորային, որոնցից՝ 10 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 9-ը ներառյալ, 20 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 8-ը ներառյալ,

7) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով մինչև 26 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 20-ը ներառյալ,

8) տեխնիկական մասնագիտություններով մինչև 39 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 20-ը ներառյալ,

9) թիկունքային մասնագիտություններով մինչև 20 պահեստազորային՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 20-ը ներառյալ,

10) տեղագրական մասնագիտություններով մինչև 19 պահեստազորային՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 10-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան